

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ*

Հայկ Սարգսյան

Բանալի բառեր՝ փափուկ ուժ, կոշտ ուժ, Ջոզեֆ Նայ, ազդեցություն, քաղաքական մշակույթ, քաղաքական արժեքներ, գրավչություն, հարկադրանք, արտաքին քաղաքականություն, քաղաքական լեգիտիմություն:

Դեռևս հնագույն ժամանակներից ի վեր իշխանություն/ուժ հասկացությունը գտնվել է ժամանակի խոշոր մտածողների ուշադրության կենտրոնում [1]: Պատմական տարբեր ժամանակահատվածներում այդ հասկացությանը տրվել են տարբեր սահմանումներ: Ժամանակակից ամերիկացի քաղաքագետ Ռոբերտ Դալի կարծիքով՝ իշխանությունը մի դերակատարի ունակությունն է՝ ազդելու մյուս դերակատարի գործողությունների վրա՝ վերջինիս կամքին հակառակ [2]:

Պատմականորեն պետությունների՝ սեփական նպատակներին հասնելու կարողությունն առնչվել է այնպիսի ռեսուրսների հետ, ինչպիսիք են՝ տարածքը, բնակչությունը, բնական ռեսուրսները, բանակը, տնտեսական հզորությունը և այլն: Ընդհուպ մինչև 20-րդ դարը միջազգային հարաբերություններում գերակա դիրք զբաղեցնող ռեալիստական հայեցակարգը հիմնականում առաջնորդվում էր հենց այդ սկզբունքներով՝ պետություններին դասակարգելով ըստ իրենց ունեցած նյութական ռեսուրսների: Սակայն 20-րդ դարի վերջում ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի ջանքերով ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ ներմուծվեց մի եզրույթ, որը բոլորովին այլ պրիզմայի ներքո էր դիտարկում իշխանությունը/ուժը: Նայի կողմից ներմուծված այդ եզրույթն առչվում էր ուժի ոչ նյութական, դժվար չափելի, սակայն ոչ պակաս կարևոր ասպեկտին: Խոսքը .փափուկ ուժե (soft power) տերմինի մասին է:

Ինչպես և ցանկացած այլ սոցիալ-քաղաքական երևույթի, այնպես էլ «փափուկ ուժի» դեպքում հասկացության համընդգրկուն սահմանումը բավականին խնդրահարույց է: Ներկայումս հետազոտողներն ավելի շատ զբաղված են այդ հասկացության բովանդակային շրջանակների սահմանազատմամբ:

«Փափուկ ուժ» տերմինը Ջ. Նայի կողմից գիտական շրջանառության մեջ մտցվեց 1990թ.-ին գրված «Հարկադրված առաջնորդություն. ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը աշխատության մեջ» [3]: Հատկանշական է, որ աշխատությունը լույս տեսավ այն ժամանակ, երբ Սառը պատերազմը մոտենում էր իր ավարտին, և Խորհրդային միությունը գտնվում էր հոգեվարքի պայմաններում: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում «փափուկ ուժը», որպես այդպիսին, ուներ սահմանափակ կիրառություն՝ հիմնականում դրսևորվելով հակամարտող բլոկերի ներսում: Տերմինը, շրջանառության մեջ մտնելով, ըստ էության, խորհրդանշեց միջազգային հարաբերություններում որակական նոր տարրերի ի հայտ գալու հանգամանքը:

Փափուկ ուժի ազդեցության և դերակատարության մեծացումը մեծապես պայմանավորված է ժամանակի ընթացքում աշխարհակարգի հիմնական ուժային կենտրոնների կողմից թելադրվող քաղաքականության փոխակերպմամբ: Վերջիններս, գլոբալիզացվող աշխարհում արդեն ունակ չլինելով իրենց կամքը թելադրել ռազմական ուժով, ստիպված են ապավինելու իրենց նպատակներին հասնելու այլ՝ ոչ ռազմական միջոցների:

* Հոդվածն ընդունվել է 24.11.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

Ինչպես և նմանատիպ այլ հասկացությունների դեպքում՝ **փափուկ ուժի** պարագայում ևս մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել մի քանի տասնյակ սահմանումների: Սակայն մինչ **փափուկ ուժի** սահմանումը հարկ է նախևառաջ սահմանել ,կոշտ ուժե հասկացությունը, քանի որ փափուկ ուժը ծագել և ձևավորվել է հենց ի հակադրություն, միգուցե նաև ի լրումն **կոշտ ուժի**: Կոշտ ուժը պատմականորեն եղել է միջազգային հարաբերություններում խնդիրների լուծման առանցքային մեխանիզմը: Այսպես, Ջ. Նայի կարծիքով, կոշտ ուժը սեփական նպատակներին հարկադրանքի միջոցով հասնելու ունակությունն է [4]: Մեկ այլ ամերիկացի քաղաքագետ Էռնստ Ուիլսոնի կարծիքով՝ կոշտ ուժը, օբյեկտին՝ սեփական կամքին հակառակ գործողություններ կատարել հարկադրելու ունակությունն է [5]: Ցանկացած պարագայում **կոշտ ուժ** հասկացության սահմանման առանցքը մեր կարծիքով այն է, որ օբյեկտը հարկադրված է գործելու/գործում է իր կամքին հակառակ: Խնդիրն էական է այն իմաստով, որ որոշ հեղինակներ **կոշտ ուժը** նույնականացնում են միմիայն ռազմական ուժի հետ, ինչն իրականում միայն դրա բաղադրիչներից մեկն է:

Ինչ վերաբերում է **փափուկ ուժ** հասկացության սահմանմանը, ապա հարկ է նախևառաջ մատնանշել հասկացության հեղինակ Ջ. Նայի կողմից տրված սահմանումը: Նրա կարծիքով՝ ,փափուկ ուժը ցանկալիին հասնելու ունակությունն է ոչ թե հարկադրանքի, այլ գրավչության/համոզման միջոցով [6]: Ավելի ուշ՝ 2004թ. գրված ,Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականության մեջ հաջողության հասնելու միջոցները աշխատությունում, Նայն իր սահմանումն ընդլայնեց՝ այն դիտարկելով որպես օրակարգի ձևավորման, համոզման, գրավչության միջոցով այլ դերակատարների վրա ազդեցության միջոց՝ ցանկալի արդյունքներին հասնելու նպատակով [7]: Երկրորդ սահմանման մեջ առանձնահատուկ հետաքրքրական է օրակարգի ձևավորման մեխանիզմի մատնանշումը, որը, ըստ էության, սերտորեն առչնվում է ներկայումս տարածված կառուցվածքային ուժի (Structural power) հայեցակարգի հետ [8]: Ամեն դեպքում, ինչպես երևում է, Նայն առանձնահատուկ շեշտադրում է գրավչության գործոնը՝ նկատի ունենալով, որ փափուկ ուժ կիրառող դերակատարը փորձում է դրդել մյուսներին գործելու իր համար ցանկալի ձևով՝ զերծ մնալով կոշտ ուժի կիրառումից:

Ըստ Օքսֆորդի բառարանի՝ **փափուկ ուժը** սահմանվում է որպես միջազգային հարաբերություններում կիրառվող գործիք, որը դրսևորվում է տնտեսական կամ մշակութային ազդեցության միջոցով [9]: Ուստի ևս քաղաքագիտական մտքի շրջանակներում փափուկ ուժը դիտարկվում է որպես արտաքին քաղաքականության ռեսուրս, որն իր առանձնահատուկ տեղն ունի արտաքին քաղաքականության մյուս ռեսուրսների շարքում՝ պայմանավորված դրա նորմատիվային, դժվար չափելի բնույթով [10]:

Բոլոր դեպքերում, **փափուկ ուժի** սահմանումների մեջ առանցքն այն է, որ օբյեկտը գործում է սեփական կամքով՝ միաժամանակ նպաստելով սուբյեկտի մտադրությունների իրականացմանը: Այստեղ հարկ է հատուկ ընդգծել երկու կարևոր հանգամանք: Օբյեկտի՝ սեփական կամքով գործելը փափուկ ուժի անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայման է: Արդյունավետ փափուկ ուժի կիրառման մասին խոսելու համար հարկ է նաև իմանալ այդ ուժը կիրառող սուբյեկտի նպատակները/մտադրությունները: Ուժն իմաստավորվում է միայն այն համատեքստում, որում այն կիրառվում է: Այսինքն՝ երկրորդ անհրաժեշտ բաղադրիչը փափուկ ուժի կիրառման արդյունքում օբյեկտի վարքագծի՝ սուբյեկտի մտադրություններին համապատասխան լինելն է: Մեր կարծիքով, եթե սուբյեկտը պարզապես գրավիչ է օբյեկտի համար, ապա դա դեռևս չի տալիս խոսել փափուկ ուժի կիրառման մասին, փոխարենն այստեղ գործ ունենք ազդեցության հետ: Սակայն, երբ այդ գրավչության արդյունքում/միջոցով օբ-

յեկտն սկսում է գործել սուբյեկտի մտադրություններին համապատասխան, ապա այդ դեպքում կարելի է փաստել արդյունավետ փափուկ ուժի կիրառումը:

Այսպիսով՝ **փափուկ ուժ** հասկացության սահմանման հիմքում ընկած է այդ ուժի օբյեկտ համարվող դերակատարի՝ սեփական կամքով սուբյեկտի ցանկացած գործողությունը կատարելու/չկատարելու հանգամանքը: Ըստ այդմ, տնտեսական սանկցիաները չեն կարող համարվել փափուկ ուժ, նույնիսկ եթե դրանք չեն ներառում բուն ուժային/ռազմական բաղադրիչ: Պատճառն այստեղ այն է, որ տնտեսական սանկցիաները պարզապես հարկադրում են/նպատակ ունեն հարկադրելու օբյեկտին փոխելու իր քաղաքականությունը՝ սուբյեկտի առաջնահերթություններին համապատասխան: Եթե արդյունքում օբյեկտը փոխում է իր քաղաքականությունը, ապա վերջինս դա անում է ոչ իր սեփական կամքով, այլ՝ հարկադրված լինելով դուրս գալ իր համար ստեղծված բարդ իրավիճակից:

Միևնույն ժամանակ, ասվածը դեռևս չի վկայում, որ կոշտ և փափուկ ուժերը միմյանց հետ որևէ առնչություն չունեն: Ընդհակառակը՝ դժվար է այսօր գտնել այնպիսի դերակատար, որը կկարողանա արդյունավետ կերպով օգտագործել փափուկ ուժը՝ առանց դրա հիմքում կոշտ բաղադրիչի: Մյուս կողմից՝ փափուկ ուժը չի կարելի համարել կոշտ ուժի պարզ արտացոլումը: Այդպես, օրինակ, Սկանդինավյան երկրներն առանձնապես աչքի չեն ընկնում իրենց ռազմական/ուժային պոտենցիալով, սակայն նրանք համարվում են գրավիչ: Տրամագծորեն հակառակ իրավիճակը բնորոշ էր Խորհրդային Միությանը. վերջինիս հզոր ռազմաքաղաքական պոտենցիալը ոչ միայն չէր նպաստում փափուկ ուժի մեխանիզմների մշակմանը, այլև խոչընդոտում էր դրան՝ հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ն իր այդ պոտենցիալն օգտագործում էր սեփական արբանյակներին իր տիրույթում պահելու համար (կարելի է հիշել Հունգարիայի կամ Չեխոսլովակիայի օրինակները):

Կարելի է եզրակացնել, որ կոշտ և փափուկ ուժերը գտնվում են յուրատեսակ փոխկապակցվածության մեջ: Ակնհայտ է, որ եթե կոշտ ուժը հիմնվում է ավելի շատ նյութական չափելի գործոնների վրա, ապա փափուկ ուժը ավելի նորմատիվային բնույթ ունի: Տրամաբանական է, որ կոշտ ուժի կիրառման դեպքում տվյալ պետության ձեռքբերումներն ավելի շոշափելի են կարճաժամկետ հեռանկարում, մինչդեռ փափուկ ուժի արդյունավետ կիրառման արդյունքներն ավելի տեսանելի են երկարաժամկետ հեռանկարում: Ընդ որում, յուրաքանչյուր երկիր սեփական արտաքին քաղաքական գործունեության մեջ ձևավորում է կոշտ և փափուկ բաղադրիչների իր սեփական համադրությունը: Իսկ այդ երկու բաղադրիչների հնարավոր այնպիսի հարաբերակցությունը, որն այն կիրառող սուբյեկտի համար ապահովում է առավելագույն արդյունք, Ջ. Նայն անվանում է .խելացի ուժե (smart power) [11].

Հատկանշական է, որ նույնիսկ միջազգային հարաբերություններում կոշտ ուժի գերակայության մեջ համոզված ռեալիստներն են ընդունում փափուկ ուժի գոյությունը: Այսպես՝ Ջ. Նայի կողմից **փափուկ ուժ** տերմինի շրջանառումից դեռևս շատ առաջ՝ 1939թ., ռեալիզմի հիմնադիր հայրերից մեկը համարվող Է. Մարրը խոսում էր ուժի/իշխանության 3 տիպերի մասին՝ ռազմական ուժի, տնտեսական ուժի և կարծիքների նկատմամբ վերահսկողության մասին [12]: Հենց վերջին բաղադրիչն էլ սերտորեն առնչվում է **փափուկ ուժ** տերմինի բովանդակության հետ:

Ըստ էության, փափուկ ուժը, որպես առանց հարկադրանքի սեփական նպատակներին հասնելու մեխանիզմ, գործել է դեռևս հնագույն ժամանակներից, թեև դրա կիրառությունը բավականին սահմանափակ է եղել: Մի ժամանակաշրջանում, երբ ռազմական ուժը եղել է միջպետական խնդիրների լուծման հիմնական միջոցը, փափուկ ուժի

կիրառումը խիստ անհեռանկարային էր ու անարդյունավետ: Այդուհանդերձ, հնագույն ժամանակներում ևս կան փափուկ ուժի կիրառման բավականին յուրահատուկ օրինակներ: Այսպես, օրինակ, Ալեքսանդր Մակեդոնացու կառավարման տարիներին (մ.թ.ա. 356-323թթ) հելլենական մշակույթը տարածվեց վերջինիս գրաված տարածքի մեծ մասի վրա: Հելլենիզմն իրենց ներկայացնում էր հունական և արևելյան մշակույթների յուրատեսակ միաձուլում, որում հունականն ուներ ավելի ծանրակշիռ դերակատարություն՝ ձևափոխելով արևելյանը: Որպես արդյունք՝ գրավված տարածքների վրա բնակվող ժողովուրդները դառնում էին այդ մշակույթի կրողը, ինչն անշուշտ հեշտացնում էր դրանց վերահսկումը կենտրոնական իշխանությունների կողմից:

Զ. Նայի կարծիքով՝ փափուկ ուժի դերակատարության մեծացման հիմքում ընկած է ժամանակի ընթացքում հզոր ուժային կենտրոնների՝ սեփական խնդիրները ռազմական ճանապարհով լուծելու անկարողությունը, ինչն էլ, իր հերթին, ուներ իր առանձնահատուկ պատճառները: Այլ խոսքերով՝ ժամանակի ընթացքում աշխարհակարգը փոփոխվեց այնպես, որ առաջատար խաղացողները այլևս չեն կարող իրենց կամքը թելադրել միայն ռազմական պոտենցիալների շնորհիվ, և արդյունքում՝ գործունեության դաշտ է բացվում այլ բնույթի մեթոդների համար, ինչպիսին էլ հենց փափուկ ուժն է: Ներկայիս պայմաններում համաշխարհային քաղաքականությունում հաջողության են հասնում այն դերակատարները, որոնք կարողանում են համատեղել ուժային և համոզման/գրավչության մեխանիզմները: Ինչպես նշում է Զ. Նայն իր «Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականությունում հաջողության հասնելու միջոցները աշխատությունում, պատմականորեն կոշտ ուժի դերակատարության նվազմանը նպաստել են մի շարք գործոններ [13]: Դրանցից առաջինը, նրա կարծիքով, որքան էլ հակասական լինի, այն է, որ կոշտ ուժի էվոլյուցիան ի վերջո այն դարձրեց այնքան կործանարար, որ դրա կիրառումը դարձավ խիստ անհեռանկարային: Առաջին հերթին խոսքը վերաբերում է միջուկային, ինչպես նաև զանգվածային խոցման այլ զենքերին: Ըստ այդմ, այդ զենքին տիրապետող ուժային կենտրոնների միջև պարզապես առկա է երաշխավորված փոխադարձ ոչնչացման (Mutually Assured Destruction – MAD) սկզբունքը, ինչը ենթադրում է, որ այդ զենքի կիրառման արդյունքում բոլոր կողմերն ահռելի կորուստներ կկրեն և, ըստ էության, կպարտվեն:

Կոշտ ուժի դերակատարության նվազման հիմքում ընկած մյուս գործոնը, ըստ Նայի, ժամանակակից աշխարհում ազգային ինքնագիտակցության աստիճանական վերելքն է, ինչի արդյունքում պետությունները միմյանց նկատմամբ ռազմական վերահսկողություն իրականացնելու միջոցով չեն կարող ապահովել վերջիններիս ենթարկվելը: Այլ խոսքերով ասած՝ ներկայիս աշխարհակարգում ավելի նորաձև է ազգային ինքնորոշումն ու անկախությունը, քան գաղութացումը: Անցյալում, գաղութային քաղաքականության պայմաններում, կոշտ ուժը մեծ «պահանջարկ» ուներ, քանի որ գաղութների արդյունավետ վերահսկողությունը հիմնված էր մեծապես ռազմական ուժի վրա: Դրան հակառակ՝ 1960-ական թվականներից սկսած գաղութային քաղաքականությունը մեծապես ապլեզիոսիմացվեց, ինչի արդյունքում կոշտ ուժի կիրառումը որպես արդյունավետ գաղութային քաղաքականության միջոց պարզապես դուրս եկավ օրակարգից:

Կոշտ ուժի դերակատարության նվազման մեկ այլ հիմնապատճառ է ներկայումս ժողովրդավարացման միտումների առկայությունը և հատկապես առաջատար ուժային կենտրոնների մի մասի՝ ժողովրդավարական քաղաքական համակարգեր ունենալը (ԱՄՆ/Եվրոպա): Ըստ այդմ, Նայի կարծիքով, ներկայիս հետարդյունաբերական հասարակություններն ավելի շատ միտված են բարեկեցության, քան փառքի՝ հնարավորինս խուսափելով բարձր կորուստներից՝ հատկապես բարձր ռիսկայնության պայմաններում:

Սա չի նշանակում, որ պետությունները ներկայումս զերծ են մնում կոշտ ուժի կիրառումից: Այնուամենայնիվ, ռազմական հռետորաբանության խիստ նվազումը ժամանակակից ժողովրդավարություններում ենթադրում է, որ ուժի կիրառման համար անհրաժեշտ է բարոյական հիմնավորում՝ հանրության օժանդակությունը ստանալու նպատակով: Փաստորեն ժողովրդավարության կայացումը ևս սահմանափակող գործոն է կոշտ ուժի քաղաքականության կիրառման համար: Ըստ Նայի՝ ժամանակակից աշխարհում գոյություն ունեն 3 տիպի երկրներ՝ 1) աղքատ/հետամնաց, նախաարդյունաբերական (որոնք հիմնականում փոլոզված կայսրությունների մնացորդներն են), 2) զարգացող արդյունաբերական երկրներ (Հնդկաստան, Չինաստան, Ռուսաստան), ինչպես նաև 3) զարգացած հետարդյունաբերական երկրներ (Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Ճապոնիա) [14]: Կոշտ ուժի կիրառումը դեռևս շարունակում է տարածված լինել առաջին խմբի երկրներում, ընդունվում է երկրորդ խմբի, սակայն գրեթե չի հանդուրժվում երրորդ տիպի պետություններում: Բրիտանացի դիվանագետ Ռոբերտ Քուլերի խոսքերով, «ամենահզոր պետությունների մեծամասնությունն այլևս չի ուզում պատերազմել կամ նվաճել: Պատերազմները դեռևս տեղի են ունենում, սակայն շատ ավելի հազվադեպ, քան մեկ դար առաջ» [15]:

Եվ վերջապես, ժամանակակից ուժային կենտրոնների համար կոշտ ուժի կիրառումից զերծ մնալու ևս մեկ պատճառ է գլոբալիզացվող աշխարհում սեփական տնտեսական բարեկեցությունը պահպանելու ծգտումը: Խնդիրն այս դեպքում երկակի բնույթ ունի: Նայի՝ կոշտ, և հատկապես ռազմական ուժի կիրառումը ներկայիս տեխնոլոգիական զարգացածության պայմաններում կապված է աննախադեպ ծախսերի հետ: Երկրորդը՝ փոխկապակցված աշխարհում կոշտ ուժի կիրառումն անպայման այս կամ այն չափով ազդում է աշխարհատնտեսական գործընթացների վրա, ինչը կարող է կրկին անուղղակիորեն հանգեցնել այդ ուժը կիրառող դերակատարների համար տնտեսական կորուստների:

Այսպիսով՝ նշյալ միտումները պայմանավորում են փափուկ ուժի ազդեցության մեծացումը ներկայիս աշխարհակարգում: Սակայն, քանի դեռ կան պետություններ, որոնք սեփական խնդիրները լուծելիս ապավինում են կոշտ ուժին (սա վերաբերում է Նայի նշած պետությունների հատկապես առաջին, մասամբ նաև երկրորդ խմբին), փափուկ ուժի ազդեցությունը կշարունակի մնալ սահմանափակ: Մյուս կողմից, ոչ բոլոր խնդիրներն են կարող լուծվել փափուկ ուժի միջոցով: Ինչպես նշում է Ջ. Նայթ, «նույնիսկ եթե Հյուսիսային Կորեայի բռնապետ Կիմ Չեն Իրը նայի հոլիվուդյան ֆիլմեր, միևնույն է, դրանք դժվար թե որևէ կերպ ազդեն միջուկային զենք ստեղծելու նրա մտադրության վրա» [16]: Այսինքն՝ ամբողջատիրական քաղաքական համակարգի պարագայում փափուկ ուժի արդյունավետությունը խիստ սահմանափակ է: Եվ հակառակը՝ ժողովրդավարացման, տեղեկատվական տեխնոլոգիաների աճի հետ զուգահեռ փափուկ ուժի տիրույթը կշարունակի մեծանալ:

Փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտների ուսումնասիրության հիմնախնդիր շրջանակներում չի կարելի չանդրադարձնալ **փափուկ ուժի** ռեսուրսների տիպաբանությանը՝ հաշվի առնելով, որ երբեմն շատ հեղինակներ փափուկ ուժը նույնականացնում են դրա ռեսուրսների հետ: Այդ դեպքում, որևէ երկրի մշակույթը սկսում է դիտարկվել որպես **փափուկ ուժ**, մինչդեռ իրականում այն ընդամենը փափուկ ուժի կիրառման մեխանիզմներից/միջոցներից մեկն է: Սեր կարծիքով՝ նպատակահարմար է տարանջատել **փափուկ ուժը** դրա կիրառման համար անհրաժեշտ ռեսուրսներից: Ըստ այդմ, **փափուկ ուժի** ռեսուրսներն ընդգրկում են այն բոլոր միջոցները, որոնք միտված են սուբյեկտի նպատակների իրականացմանը, իսկ բուն փափուկ ուժ հասկացությունը ներառում է սուբյեկտի մտադրությունից մինչև իր համար նախընտրելի

քաղաքական վերջնարդյունք ընկած գործընթացը:

Փափուկ ուժի ռեսուրսների մասին խոսելիս ամերիկացի քաղաքագետ Ջուլիո Գալլարոտտին առանձնացնում է դրա 2 տիպ՝ արտաքին և ներքին [17]: Արտաքին ռեսուրսների տակ նա նկատի է առնում տվյալ պետության արտաքին քաղաքականությունը, միջազգային իրավունքին, նորմերին և ինստիտուտներին հետևելը, դաշինքային պարտավորությունների կատարումը, սեփական կարճաժամկետ նեղ շահերը երկարաժամկետ համընդհանուր շահերին զոհաբերելու պատրաստականությունը և այլն:

Ինչ վերաբերում է ներքին ռեսուրսներին, ապա այս դեպքում Գալլարոտտին նկատի ունի առաջին հերթին տվյալ պետության քաղաքական համակարգն ու քաղաքական մշակույթը, մասնավորապես՝ սոցիալական համաձայնության, հանդուրժողականության մթնոլորտը, բարեկեցիկ կյանքի համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ներքին և արտաքին վերոնշյալ գործոնների համադրումն էլ ձևավորում է այս կամ այն պետության փափուկ ուժը:

Մեր կարծիքով, որքան էլ փափուկ ուժը հիմնված լինի ներքին և արտաքին ոլորտներում օրինակելի պետության գաղափարի վրա, միևնույն է, դրանով փափուկ ուժի ռեսուրսները չեն սահմանափակվում: Այս իմաստով, փափուկ ուժի ռեսուրսների ավելի համընդգրկուն տիպաբանություն է առաջարկում հենց Ջ. Նայթը, որի կարծիքով, փափուկ ուժը, որպես այդպիսին, հիմնվում է երեք սյուների վրա, որոնք են մշակույթը (որքանով է այն գրավիչ մնացյալ դերակատարների համար), քաղաքական արժեքները (որքանով է տվյալ պետությունը հետամուտ լինում այդ արժեքներին) և արտաքին քաղաքականությունը (որքանով է լեգիտիմ մյուս դերակատարների աչքերում) [18]: Այս երեք բաղադրիչներն, ըստ Նայթի, պայմանավորում են տվյալ պետության գրավչությունը արտաքին հարաբերություններում և իր ցանկացած նպատակներին առանց կոշտ ուժի կիրառման հասնելու ունակությունը:

Ինչպես երևում է Նայթի տիպաբանության մեջ, բուն պետությունը որպես դերակատար է հանդես գալիս միայն երրորդ բաղադրիչում, մինչդեռ քաղաքական մշակույթը և քաղաքական արժեքները վերաբերում են ավելի շատ տվյալ պետության հասարակությանը (թեև պետությունը ևս կարող է իր դերակատարությունն ունենալ այս ոլորտներում) և պակաս դեր չեն խաղում փափուկ ուժի արդյունավետ կիրառման գործում:

Փափուկ ուժի ռեսուրսների պրագմատիկ տիպաբանություն է առաջարկում ռուս քաղաքագետ Օ. Լեոնովան, ով յուրովի համադրում է փափուկ ուժի պետական և ոչ պետական մակարդակները: Այսպես, նրա կարծիքով, փափուկ ուժի ռեսուրսների շարքում են՝

- տեղեկատվական հոսքերը
- արտասահմանյան լսարանին ուղղված քաղաքական պրոպագանդան
- գլոբալ մարքեթինգը
- պետական լեզուն և դրա տարածվածությունն աշխարհում
- հանրային դիվանագիտությունը
- գեոսաշրջությունը, սպորտը և մշակութային փոխանակումները
- կրթական համակարգը
- տեղեկատվական պատերազմներ վարելու ունակությունը
- միգրացիոն քաղաքականությունը (այդ թվում՝ սփյուռքի գործոնը) [19]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ներկայումս **փափուկ ուժ** հասկացության լայնորեն կիրառվելու հանգամանք բնավ պատահական չէ. պատմականորեն համաշխարհային ուժային կենտրոնների՝ միմյանց կոշտ ուժով սեփական խնդիրները լուծելու անկարողությունը օրակարգ մտցրեց այլ միջոցներով սեփական նպատակների

իրականացման կարիքը և հրամայականը: Մյուս կողմից՝ չեն դադարում քննարկումները փափուկ ուժ հասկացության բովանդակային սահմանների, դրա բաղադրիչների, ռեսուրսների ու գործիքակազմի վերաբերյալ: Ամեն դեպքում, փաստ է, որ միջազգային հարաբերություններում խնդիրների լուծման միջոցները ժամանակի ընթացքում ռազմի դաշտից տեղափոխվել են այլ հարթություններ, իսկ ռազմական լուծումներ տրվում են միայն ծայրահեղ դեպքերում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իշխանություն և ուժ տերմինները անգլալեզու գրականությունում մատնանշվում են միևնույն՝ power տերմինով: Ելնելով մեթոդոլոգիական նպատակահարմարությունից՝ սույն աշխատանքում իշխանություն և ուժ տերմինները դիտարկվում են որպես հոմանիշներ
2. Dahl, Robert A., “The Concept of Power”, Behavioral Science, 2:3, July, 1957, p. 201
3. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead: The Changing Nature of American Power”. NY: Basic Books, p.330
4. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead: ...”, p. 5
5. Ernest J. Wilson (March 2008). “Hard Power, Soft Power, Smart Power” (PDF). The of the American Academy of Political and Social Science. 616 (1), p. 110–124
6. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p.7
7. Nye, Joseph. Soft Power: The Means to Success in World Politics (New York: Public Affairs, 2004) p. 128
8. Pustovitovskij A., Kremer J-F., Structural Power and International Relations Analysis, Institute of Development Research and Development Policy, Volume 191, Bochum, 2011, p.14-16, <http://www.cgs-bonn.de/pdf/wp-191.pdf>
9. Oxford Dictionary online, https://en.oxforddictionaries.com/definition/soft_power
10. Леонова, О. , “Мягкая сила – ресурс внешней политики государства”, журнал ОБОЗРЕВАТЕЛЬ-OBSERVER 4/2013, с. 2, http://www.observer.materik.ru/observer/N4_2013/027_040.pdf
11. Nye, Joseph, “The Future of Power”, Public Affairs, New York, p. 207-2015
12. Carr E., “The Twenty Years’ Crisis 1919-1939: An Introduction to the Study of International Relations”, LONDON, MACMILLAN & CO. LTD1946, p. 102, <https://www.scribd.com/doc/167060273/E-H-Carr-the-Twenty-Years-Crisis-1919-1939-an-Introduction-to-the-Study-of-International-Relations-1946>
13. Nye, Joseph. Soft Power: The Means to Success in World Politics (New York: Public Affairs, 2004) p. 32
14. Nye, Joseph, “Hard and Soft Power in a Global Information Age”..., p. 2, http://mercury.ethz.ch/serviceengine/Files/ISN/21702/ichaptersection_singledocument/cb06ee9a-1474-4711-bdff-cb7d95184c2e/en/01_HardSoftPower.pdf
15. Cooper, Robert, “The postmodern State and the World Order (London:Demos/ The Foreign Policy Centre, 2000), p. 22
16. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p. 12
17. Gallarotti, Giulio M., “Soft Power: What it is, why it’s important, and the conditions under which it can be effectively used”. / Division II Faculty Publications, Paper 57, 2011, p. 20-25.
18. Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p. 11
19. Леонова, О. , “Мягкая сила – ресурс внешней политики государства”, ...стр. 4, http://www.observer.materik.ru/observer/N4_2013/027_040.pdf

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Փափուկ ուժ» հասկացության տեսահայեցակարգային հիմքերը
Հայկ Սարգսյան

Հոդվածի նպատակը ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի կողմից գիտական շրջանառության մեջ մտցված «փափուկ ուժ» հասկացության տեսահայեցակարգային ասպեկտների ուսումնասիրությունն է: Հոդվածի հեղինակը եկել է եզրակացության, որ *փափուկ ուժը* պետության՝ առանց հարկադրանքի սեփական նպատակներին հասնելու կարողությունն է: Բացի այդ՝ հոդվածում շեշտադրվում է այն հանգամանքը, որ *փափուկ ուժը*՝ որպես արտաքին քաղաքականության գործիք, արդիական է դարձել ժամանակի ընթացքում պետությունների՝ սեփական խնդիրները միայն ռազմական ուժով լուծելու անկարողությունից: Հոդվածի վերջում ներկայացվում են *փափուկ ուժի* ռեսուրսները, բաժանում է իրականացվում այդ ռեսուրսների պետական և ոչ պետական մակարդակների միջև:

РЕЗЮМЕ

Теоретические основы концепции «мягкой силы»

Айк Саркисян

Ключевые слова: *мягкая сила, жесткая сила, Джозеф Най, влияние, политическая культура, политические ценности, привлекательность, принуждение, внешняя политика, политическая легитимность*

Цель статьи заключается в изучении теоретического базиса понятия "мягкой силы", автором которой является американский исследователь Джозеф Най. Автор настоящей статьи приходит к выводу, что суть "мягкой силы" заключается в процессе материализации приоритетов государства, их трансформации в реальные политические результаты и дивиденды без всякого принуждения. Более того, в статье утверждается, что важность мягкой силы значительно возросла, в частности, в результате эволюции силы как таковой, неспособности государств достигать поставленных задач, применяя лишь инструментарий "жесткой силы". Наконец, статья выявляет также различные подходы касательно исследования ресурсов мягкой силы, и в этой связи проводится ясная грань между спецификой государственных и негосударственных ресурсов.

SUMMARY
Theoretical Basis of the Concept of *Soft Power*
Hayk Sargsyan

Keywords: *soft power, hard power, Joseph Nye, influence, political culture, political value, attraction, coercion, foreign policy, political legitimacy*

The aim of the article is to examine theoretical basis of the concept “soft power”, coined by Joseph Nye. While exploring definitions of the concept we came to the conclusion that soft power refers to the process of materialization of states’ preferences into policy outcomes without using coercion. Furthermore, the article states that the importance of soft power has grown as a result of evolution of power and the inability of states to reach their goals merely by using “hard power”. In the end, the article explores different approaches in the context of the resources of soft power and differentiates between state-level and non-state level resources.